

գիրքը գնողները, բացի օգտակար բան կարդալուց, մի համակրելի և բարի նպատակի էլ կընպատեն.

ՌՐԻՉ

Պրոֆ. Փ. Բատցէլ. Տարերը ազգագրութեան. զերմթարգմ. Իս. Յարութիւնեանց. Թիֆլիս. 1802. գ. 50 կ.

Պրոֆէսոր Բատցէլը, Լաւպցիզի համալսարանի աշխարհագրութեան անուանի ուսուցչագետը, լատինի է իւր եռահատոր «Ազգագրութիւն» (Völkerkunde)՝ աշխատութեամբ, որ արդիւնք է իւր բազմաթիւ ճանապարհորդութեանց և վարկնի ազգերի կեանքի ուսումնասիրութեան:

Այս հիմնական աշխատութիւնը ժողովրդին աւելի մատչելի անելու համար՝ հեղինակը հրատարակել է գերմաներէն լեզուով դուրս համառօտութիւնը «Տարերք ազգագրութեան» վերնազբոյղով, որի թարգմանութիւնն է յօդուածիս վերնագիրը կրող աշխատութիւնը: Գիրքը բաժանուած է միջանի դուրսներէ, որոնց մէջ ամենից հետաքրքրականը Գ. և Յ. դուրսներն են, «լեզուն» և «կրօնը», ուր հեղինակը մանրամասն հետազօտում է լեզուների և կրօնների հոգեբանական ծագումը, ի նկատի ունենալով բնական կամ վարկնի ազգերը:

Ազգագրական նիւթեր հաւաքելը մեղանում էլ բաւական տարիներ առաջ է սկսուել և այդ ճիւղի նահապետ իրաւամբ պէտք է համարել հանգուցեալ Գարեգին եպիս. Սրուանձտեանցին, որ դեռ վաթսունական թուականներին «Արծիւ վասպուրական»-ի մէջ սկսել էր հետաքրքրական յօդուածներ հրատարակել մեր աշխարհի շանազան մասերի վերաբերեալ և իւր սիրուն, ճկուն և սահուն լեզուով հոգի ու շունչ տալ անկենդան հայ ժողովրդին, նորա լեզուին ու սովորութիւններին, նորա զիր ու դարութեան, նորա կենցաղին: Սակայն աւանդ, որ մի Սրուանձտեան միայն ունեցանք, նա եղաւ այդ մասում առաջինը և վերջինը և չթողեց իւր լեռնից ոչ մի արժանաւոր լաջորդ:

Մեր մէջ էլ ազգագրութեամբ զբաղողները պէտք է ուսումնասիրեն պր. Բատցէլի աշխատութեան նման զրուածքներ, որպէս զի կարողանան հաւաքուած նիւթերը մշակել գիտութեան արդի պահանջների համաձայն: Այս տեսակէտից

լիշեալ թարգմանութիւնը մենք գտնում ենք խիստ նպատակաւարմար և լանձնարարում ենք մեր ընթերցողներին:

Գիրքը թարգմանուած է թարգմանչին լատուկ մաքուր հայերէնով:

Ս.

Leopold Von Ranke's Bildungsjahre und Geschichtsauffassung. Von Dr. Wahan Nalbandian. Leipzig. B. G. Teubner, 1902. էջ VIII+103. գինն է 3, 40 մարկ:

Գերմանական համալսարաններում ուսանողները գիտութիւնների տեսութիւնների հետ միասին՝ միջոց ունին նաև փորձնական պարապմունքներ ունենալու ուսուցչապետների ղեկավարութեամբ: Փորձնական պարապմունքներ ունին ոչ թէ միայն փորձնական գիտութիւնների ուսանողները—քօլիկները, քիմիկոսները և այլն—այլ նաև զուտ տեսական գիտութիւններ սովորողները, ինչպէս օրինակ պատմութեան, աշխարհագրութեան, փիլիսոփայութեան և այլն ունկնդիրները: Այդ փորձնական աշխատութիւնները տեղի են ունենում ալպէս կոչուած «սեմինար»-ներում, ուր ուսանողները ուսուցչապետի խորհրդով զրաւօր աշխատութեանց նիւթեր են ընտրում, գիտնական մեթոդով մշակում և ապա կարդում «սեմինարի» նիստերում և քննադատութիւններ լսում նախ ուսանողների և ապա ուսուցչապետի կողմից: Լալպցիգի համալսարանի պատմական «սեմինար»-ում մշակուած նիւթերից մէկն է ներկայացնում և պ. Վ. Նալբանդեանի վերոլիկալ աշխատութիւնը՝ ուսուցչապետ Լամպրեխտի ղեկավարութեամբ: Աշխատութեան նիւթն է աշխարհահռչակ պատմարան Լէօպօլդ Ռանքէի համառօտ կենսագրութիւնը և այն խնդիրը՝ թէ ինչպէս է նա ըմբռնում պատմութիւնը \*):

\*) Ռանքէն 83 տարեկան հասակում սկսեց իւր «գլուխ գործոցը»—ընդհանուր կամ ինչպէս ինքն է կոչում «Աշխարհի» պատմութիւնը—Weltgeschichte—և ղեռ չվերջացրած, 91 տարեկան հասակում վախճանուեց 1886 թ.: Մեզ ծանօթ է իսահակ Թարութիւնեանի լոզուածը Մոսկուայի «Հանդէս գրականական»-ում Ռանքէի ընդհանուր պատմութեան մասին, որից տառջ են բերուած այն բոլոր հատուածները, որոնք վերաբերում են հայերին: